

ՈՒՐԲԱԹ, 24 ՕԳՈՍՏՈՍԻ 2018Թ.
№ 21 (479)

**28 տարի առաջ՝ 1990թ. օգոստոսի
23-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն
ընդունեց «Հռչակագիր Հայաստանի
անկախության մասին»**

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Կապան, Դավիթ Բեկի արձանը



Կապանի ավագանին առկախել է նախորդ իշխանությունների օրոք ԶՊՄԿ-ի օգտին կայացված որոշման իրականացումը

Օգոստոսի 21-ին Կապանի ավագանու արտահերթ նիստում հետաձգվել է Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատին առնչվող չորս հարցի քննարկումը: Կապանի համայնքապետարանի մամուլի քարտուղար Մարգարիտա Մանուկյանը մեզ փոխանցեց, որ ավագանու անդամներից ժամ Մովսիսյանն առաջարկել է քվեարկել ոչ թե այդ չորս օրակարգային հարցերի ընդունման, այլ հետաձգման համար, որպեսզի հնարավորություն

ունենան առավել լավ ծանոթանալ դրանց: Արդյունքում ներկա 10 անդամից 5-ը կողմ է քվեարկել, 4-ը՝ դեմ, մեկ հոգի ձեռնպահ: Չետաձգված հարցերը վերաբերում են ԶՊՄԿ-ի արդյունաբերական գործունեությանը: Հիշեցնենք, որ 2011 թ. ապրիլի 28-ին Տիգրան Սարգսյանի կառավարությունը որոշեց Սյունիքի մարզի Քաջարան, Արծվանիկ, Սեւաքար, Աճառան, Չափնի եւ Սյունիք գյուղական

համայնքների 608 հա հողերի (համայնքներին եւ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող) նկատմամբ ճանաչել բացառիկ գերակա հանրային շահ, վերցնել դրանք սեփականատերերից, փոխել նպատակային նշանակությունը (կատեգորիան), դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, ու վարձակալությանը հանձնել

էջ 3

«Արեւիք» ազգային պարկի սահմանների հստակեցումը տարածքը կփրկի հանքերի ներխուժումից

«Չանգեզուր կենսոլորտային համալիր»-ի մեջ մտնող «Արեւիք» ազգային պարկը հիմնադրվել է 2009 թվականին, սակայն մինչ օրս հստակեցված չեն դրա սահմանները: Չնայած կառավարության նույն թվականի որոշման մեջ նշված է, որ պարկի հողաշինարարական եւ անտառաշինական քարտեզների հիման վրա դեռեւս 2010 թվականի ընթացքում սահմանված կարգով պետք է ապահովվեր տարածքի քարտեզագրումը, գոտեւորման սխեմայի կազմումը, պահպանման գոտու սահմանների ճշտումը, պարկը մինչ օրս ունի ընդամենն առաջարկվող կամ այսպես կոչված «ենթադրվող» սահմաններ, իսկ վերջնական քարտեզագրում եւ գոտեւորում դեռեւս չի իրականացվել: Միայն 2017 թվականի վերջին Գերմանական զարգացման բանկի (KfW) ֆինանսավորմամբ եւ «Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան»-ի շրջանակներում Բնապահպանության նախարարությունը սկսել է «Արեւիք» ազգային պարկի եւ «Բողաքար» պետական արգելավայրի սահմանների ճշգրտումը/սահմանագծումը եւ կադաստրային գրանցումը: Այս տարվա մարտ ամսից աշխատանքները մեկնարկել են: Դրանք իրականացնում է «Սողու-2015» ՍՊԸ-ն: Աշխատանքները կավարտ-

վեն հոկտեմբերի 31-ին: Ըստ ընկերության փորձագետ Արման Վարդանյանի հավաստման՝ արդյունքում, բացի ազգային պարկի սահմանագծից, ունենալու են նաեւ ճիշտ համարված կադաստրային քարտեզներ եւ առնվազն ազգային պարկի սահմաններում կադաստրային միավորների հետ խնդիրներ չի լինելու ապագայում: Երկար ժամանակ է, ինչ «Արեւիք» ազգային պարկի եւ սահմանակից հողօգտագործողների միջեւ խնդիրներ կան. ստեղծվել է քառտիկ վիճակ, քանի որ հատուկ պահպանվող տարածքի սահմանները հստակեցված չեն: Հստակ սահմանագծի բացակայությունից օգտվում են հանքարդյունաբերական գործունեություն ծավալող ընկերությունները՝ խաթարելով էկոհամակարգի բնականոն կենսագործունեությունը, առաջացնելով իրավաբանական կազուս: Կառավարության 2009 թվականի որոշման համաձայն՝ «Արեւիք» ազգային պարկի պահպանման (բուֆերային) գոտում արգելվում է տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը,

էջ 2

Հիմնախնդիրները՝ լուսանկարների միջոցով

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից հայտարարված կայուն զարգացման նպատակներ ծրագրի շրջանակներում Գորիսի քաղաքային պատկերասրահում հանդիսավորությամբ բացվեց «Իմ սեր, իմ Հայաստան» խորագրով ցուցահանդեսը: Բացելով ցուցահանդեսը, պատկերասրահի ղեկավար ժիրայր Մարտիրոսյանն ասաց, որ ցուցադրված լուսանկարչական աշխատանքներում Հայաստանն է՝ իր բնությամբ, արարող իր մարդկանցով, եւ ուսանողները հետաքրքիր մոտեցումներ են ցուցաբերել իրական կյանքը լուսաբանելու համար: Ցուցահանդեսում ներկայացվել են Երեւանի եւ Արմավրի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի օպերատորության եւ գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի 12 ուսանողի լուսանկարչական աշխատանքները: Այդ ստեղծագործությունների թեման բազմաոլորտ է՝ ներառելով կայուն զարգացման նպատակները: 2016թ. հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ են մտել 2015թ. սեպտեմբերին Նյու Յորքում կայացած՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման զագաթնաժողովին աշխարհի երկրների առաջնորդների ընդունած՝ «Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030-ում» ներառված 17 նպատակները: Առաջիկա 15 տարվա ընթացքում, առաջնորդվելով բոլորին վերաբերող այս նոր նպատակներով, երկրները կհամախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունը, պայքարելու անհավասարությունների դեմ եւ լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետեւելով, որ ոչ ոք չանտեսվի: Թեեւ կայուն զարգացման նպատակներն իրավաբանորեն պարտադիր չեն, կառավարություններից ակնկալվում է ստանձնել հանձնառություններ եւ մշակել ազգային ծրագրեր՝ այդ 17 նպատակներին հասնելու համար: Իսկ կայուն զարգացման առաջարկվող 17 նպատակները հետեւյալն են՝ ոչ աղքատությանը, ոչ սովին, որակյալ կրթություն, գենդերային

էջ 8



Featurepics

ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արայիկ Չարուբոյանին



Չարուբոյանի պարուն նախարար

Մեկ տարի առաջ հանրակրթության ոլորտում հանրապետության մասշտաբով «Լավագույն տնօրեն»-ի կոչում շնորհվեց Սյունիքի մարզի Եղեգի դպրոցի տնօրեն Սերի Գանդալյանին:

Ոչինչ, որ դրանից օրեր առաջ կրթության տեսչությունում այդ դպրոցում իրավիճակի վերաբերյալ, մեղմ ասած, տխուր արձանագրումներ էր կատարել:

Ոչինչ, որ դրանից հետո, հաշվի չառնելով գիտելիքների պաշարը, նրան նշանակեցին Սյունիքի մարզպետարանի կրթության վարչության պետ՝ անհասկանալի պատճառներով պաշտոնանկ անելով վարչության վաստակաշատ, բանիմաց եւ մարզում մեծ հարգանք վայելող ղեկավարին:

Ոչինչ, որ նրա լուռ համաձայնությամբ, քաջալերանքով ու դերակատարությամբ մարզի հանրակրթության ոլորտում կազմակերպվեցին լավագույն տնօրենների հետապնդումներ, որ մարզի տնօրենների մի մասին ստիպեցին սուտ մատուցություններ գրել գործող մարզպետի ընդդիմախոսների դեմ:

Ոչինչ, որ նրա պաշտոնավարման շրջանում մարզի մի շարք դպրոցներում ակնհայտորեն աղավաղվեց տնօրենների ընտրությունը:

«Արեւիք» ազգային պարկի սահմանների հստակեցումը տարածքը կփրկի հանքերի ներխուժումից

1 քուսական եւ կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը: Բացի դրանից՝ արգելվում է օգտակար հանածոների հանքավայրերի, երեւակումների շահագործումը, հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը: Չնայած դրան՝ ազգային պարկը տարիներ շարունակ ենթարկվել է հանքարդյունաբերական ընկերությունների ներխուժմանը:

Աշխարհագրագետ Լեւոն Գալստյանը հենց հանքերի հետ է կապում այդ տարածքներում քարտեզագործման աշխատանքների ձգձգումը. «Սահմանները հատուկ չեն քարտեզագրվել, սահմանագրվել, ֆիքսվել, որ դրանք հետո հանկարծ չխանգարեն եղած հանքավայրերի շահագործման գործընթացներին: Այսինքն՝ հանքավայրերի ուսումնասիրությունները կանեն, տեղերը կգտնեն, հետո դրան համապատասխան կազմեն պահպանվող տարածքների քարտեզները»:

Գալստյանը հավելել է, որ սահմանները, որոնք այսօր մոտավոր գծագրված են, տրամաբանական չեն: Նրա խոսքով՝ պահպանվող գոտիները պետք է ունենան բնական սահմաններ, մասնավորապես, դա կարող է լինել գետը, ջրբաժանը եւ այլն: Բայց այստեղ այնքան կտրտված սահմաններ կան, որ հասկանալի է դառնում դա արվել է որոշ հանքերի գոտիներ շրջանցելու համար:

Թե ինչու տարիներ շարունակ չի կատարվել պարկի քարտեզագործում, «Արեւիք» ազգային պարկի տնօրեն Գագիկ Գեորգյանը կապում է ֆինանսական խնդիրների հետ. «Նախարարությունից մեզ ասում էին, որ չի ուշանա, շուտով կլինի, այ այս տարի կլինի: Տարիներ առաջ, երբ Բնապահպանության նախարար Արամ Չարուբոյանը Մեղրիում էր, ասաց՝ ինչ խնդիրներ կան, ասացինք՝ քարտեզագործման հարցն է, ասաց՝ շուտով կլինի»:

Հատկանշական է, որ 2015 թվականի հուլիսի 2-ի Կառավարության 731-Ն որոշմամբ 630.6541 հեկտարով կրճատվել էր «Ձանգեզուր» կենսոլորտային համալիրի տարածքը «Արեւիք» ազգային պարկի եւ «Ձանգեզուր» պետական արգելոցի հաշվին: Մասնավորապես, «Արեւիք» ազգային պարկի տարածքը կրճատվել է

Ոչինչ, որ այդ ամենի հետեւանքով հանրակրթական դպրոցների մի քանի տնօրեններ ամիսներ շարունակ փորձում են իրենց ոտնահարված իրավունքները վերականգնել դատական ատյանում:

Ոչինչ, որ ստիպեցին հանրակրթական դպրոցի տնօրեններին՝ երեխաների կրթության եւ դաստիարակության համար հատկացված պետական միջոցներից գումար հատկացնել Արմավիրի մարզում հիմնադրված, բայց Սյունիքի մարզում տարածվող ինչ-որ մի թերթի, որ սպասարկում է պաշտոնից հեռացված մարզպետի ընտանեկան շահերն ու հետաքրքրությունները:

Սակայն, կա մի հարց, որ շարունակում է մնալ հրատապ:

Մեկ տարի շարունակ փորձում ենք իմանալ՝ ի՞նչ ասել է հանրակրթական դպրոցի «Լավագույն տնօրեն», այն էլ՝ հանրապետության մասշտաբով, բայց ոչ ոք այդ հարցին չի պատասխանում:

Մեկ տարի շարունակ ուզում ենք իմանալ՝ կոնկրետ ի՞նչ չափորոշիչներով են որոշում «Լավագույն տնօրեն» ասվածը եւ կոնկրետ ի՞նչ նվաճումների, հաջողությունների համար են այդ դպրոցի տնօրենին շնորհել ման կոչում, բայց ոչ ոք չի պատասխանում:

Մեկ տարի է՝ ուզում ենք հանրայնացնել «Լավագույն տնօրենի» փորձը եւ նրան դարձնել ընդօրինակման արժանի, բայց, որքան էլ զարմանալի է, թաքուն են պահում «Լավագույն տնօրենի» նվաճումները, հաջողությունները:

Չարուբոյանի պարուն նախարար

Միգուցե Դո՛ւք պատասխանեք պարզագույն այդ հարցերին, որ հետաքրքրում է մարզի հանրակրթության ոլորտի հարյուրավոր աշխատողներին:

Նոր ուսումնական տարվա նախօրյակ է եւ, կարծում ենք, «Լավագույն տնօրենի» փորձի տարածումը մեծ նպաստ կբերի ոչ միայն Սյունիքի, այլեւ ամբողջ հանրապետության կրթական համակարգում Ձեր գլխավորությամբ իրականացվող բարեփոխումներին:

«Այուրյաց երկիր»
16 օգոստոսի 2018թ.

Հարց ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցին

Հարգելի տիկին նախարար

Գործի քաղաքը հռչակվել է ԱՊՀ երկրների «մշակութային մայրաքաղաք» 2018-ի համար:

Այդ իրադարձության մեկնարկը տրվեց հուլիսի 7-8-ին Գործիսում կազմակերպված հրաշալի միջոցառումներով, որոնց նաեւ Դուք էիք մասնակցում:

Սակայն արդեն իսկ տպավորություն ունենք, որ «մշակութային մայրաքաղաք» ասվածն սկսվել է ավարտվել է հուլիսի 7-8-ի միջոցառումներով:

Կարող ենք արձանագրել նաեւ, որ ԱՊՀ մասշտաբով բացառիկ այդ հնարավորությունը չի օգտագործվում ըստ պատշաճի:

Նախ՝ տարվա առաջին վեց ամսում գոնե մեկ միջոցառում չանցկացվեց այդ ծրագրի շրջանակում:

Հուլիսի 7-8-ից հետո էլ դարձյալ լռություն է այդ առումով:

Առայժմ անհասկանալի պատճառներով, 2017-ի նույն ժամանակաշրջանի համեմատությամբ, պակասել է նաեւ Գործիսի տարածաշրջան այցելող զբոսաշրջիկների քանակը:

Մինչ այդ, սակայն, մշակույթի նախարարի տեղակալները 2017-ի վերջին հավաստիացնում էին, որ մոտ 60 միջոցառում ընդգրկող ծրագիր է նախատեսվում Գործիս «մայրաքաղաքի» հետ կապված, որոնք այդպես էլ կյանքի չեն կոչվում:



Տարվա ավարտին մնացել է չորս ամիս:

Ուզում ենք իմանալ՝ հուլիսի 7-8-ի միջոցառումներով ավարտվե՞ց Գործիսի ԱՊՀ երկրների «մշակութային մայրաքաղաք» լինելը:

Ուզում ենք նաեւ իմանալ՝ ուրիշ ի՞նչ միջոցառումներ կարելի է սպասել ԱՊՀ «մշակութային մայրաքաղաք» Գործիսում 2018-ի մնացած ամիսներին:

Եվ վերջում՝ հանրապետությունում կան Սյունիքի մարզում կան Գործիսում ո՞վ է (ովքե՞ր են) պատասխանատու այդ ծրագրի համար:

Տարբերակ Առաքելյան

Լիլիթ Մակունցի պատասխանը

Ինչպես նշեցիք, 2018թ. Գործիսը ճանաչվել է ԱՊՀ «մշակութային մայրաքաղաք», եւ միջոցառումները, բնականաբար, չեն սահմանափակում միայն բացումով:

Բացումը տեղի ունեցավ բավականին շքեղ եւ մեծ ծավալով, որը միգուցե մի փոքր մթազմում է այն փոքր միջոցառումները, որոնք իրականացվում են այս ընթացքում:

Միջոցառումները շարունակվելու են մինչեւ նոյեմբեր, եւ նոյեմբեր ամսին փակումը նույնպես կայանալու է բավականին մեծամասշտաբ եւ ծավալուն:

Ընթացիկ միջոցառումները ներառում են թե՛ համերգային ծրագրեր եւ թե՛ թատերական ծրագրեր, ինչպես նաեւ գրքերի առնչվող ցուցահանդեսներ ու քանդակներին առնչվող միջոցառումներ:

Ոլորտի գլխավոր պատասխանատուն ոլորտը համակարգող փոխնախարար Նազենի Դարիբյանն է, արտաքին կապերի վարչությունը նույնպես զբաղվում է այդ միջոցառումների համակարգմամբ:

«Գործիսը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջոցառումների շրջանակում սերտորեն համագործակցում ենք քաղաքապետարանի եւ անձամբ քաղաքապետի հետ, ով նաեւ աջակցություն է ցուցաբերում տեղում որոշակի միջոցառումների կազմակերպչական աշխատանքներ իրականացնելու: Այսինքն՝ ոչ միայն

քաղաքապետը, այլ ողջ համայնքային թիմը:

2017-ի նույն ժամանակաշրջանի հետ համեմատելուց նկատվում է զբոսաշրջիկների թվի կրճատում Գործիսի տարածաշրջանում:

Չէի կապի զբոսաշրջիկների թվի պակասը կոնկրետ Գործիսի միջոցառումների հետ:

Զբոսաշրջությունը խթանվում է ոչ միայն օտարերկրյա զբոսաշրջիկների հաշվին, այլեւ Հայաստանում ապրող բնակիչների ու քաղաքացիների հաշվին: Այսինքն կա ներքին եւ արտաքին կոմպոնենտ: Եվ ես համաձայն եմ, որ պետք է խթանեք նաեւ ներքին զբոսաշրջությունն ու կոչ անենք, որպեսզի քաղաքացիներն այս տարի կարեւորագույն միջոցառումներին մասնակցեն, որոնք տեղի են ունենում մարզերում: Մասնավորապես, Գործիսի միջոցառումներին շատ ցանկալի է, որ մասնակցեն, եւ ուրախալի էր ինձ համար տեսնել, որ բացման արարողությանը կային ոչ միայն գործիցներ, այլ նաեւ հարակից քաղաքներից, գյուղերից ու մարզերից ներկայացուցիչներ:

Զբոսաշրջության հետ կապված հարցերում սերտորեն համագործակցում ենք թե՛ Սփյուռքի, եւ թե՛ զբոսաշրջության կոմիտեի հետ, որոնց հետ կապով միջոցառումների որոշակի նախագծեր ենք անում:

16 օգոստոսի 2018թ.

գործունեություն ծավալող հանքերից ոչ մեկը չի գտնվում ազգային պարկի տարածքում. «Քարտեզագրումից հետո կարող է պարզվել, որ ինչ-որ մի հանք կարող է եւ գտնված լինել բնապահպանական հողի վրա, չեն բացառում, քանի որ կան հողեր, որոնք նախկինում ընդգրկված չեն եղել ազգային պարկի մեջ: Հիմա, երբ քարտեզագրվի, կարող է պարզվի, որ ինչ-որ մի հանք է այդ հողի վրա հայտնվել»:

Այնուամենայնիվ, նա նշում է, որ պարկի առաջարկվող կամ «ենթադր-

վող, սահմաններին կից գործում են հանքեր, որոնք ճնշում են ազգային պարկին, ազդում տարածքի կենսաբազմազանության վրա:

«Ինչ հանք էլ ուզում է լինել, կենսաբազմազանության վրա ազդում է: Ե՛վ կենդանական աշխարհի միգրացիան է փոխում, ե՛ւ բուսականություն է փոխվում: Օդն է աղտոտվում, կան ստորգետնյա ջրեր, որոնք պայթեցման աշխատանքների հետ կապված իրենց հունն են փոխում»:

ecoright.am

Գորի՛ս... այսինքն փաք սեր ու բարություն, փաք օջախ ու հայոց եռագույն եւ կամուրջ բարեկամության

Հուլիսի 7-ին Գորիսում մեկնարկեցին Գորիսը՝ 2018 թ. մշակութային մայրաքաղաք ծրագրով նախատեսված միջոցառումները: Դրա առաջին ակորդը՝ հնչեց Ստեփանակերտ-Գորիս մայրուղու վրա քաղաքի մուտքն ազդարարող հուշարձանի բացմամբ: Կարմիր ժապավենը կտրելու պատիվը տրվում է հուշարձանի ճարտարապետ Սեւադա Ջաքարյանին եւ հովանավորներից Հերմինե Առուշանյանին: Հուշարձանի բացմանը, բնականաբար, մասնակցում են նաեւ ԱՊՀ երկրներից ժամանած հյուրեր՝ թվով 150 հոգի՝ մտավորականներ, արվեստագետներ, պաշտոնատար անձինք, դեսպաններ ու դեսպանատների աշխատակիցներ: Այստեղ են նաեւ Սյունիքի մարզպետ Կարեն Յանբարձույանը, ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը:

2018թ. ԱՊՀ-ի մշակութային մայրաքաղաքի ընտրության ժամանակ հաշվի է առնվել Գորիսի հարուստ պատմությունը, նրա ավանդույթները, հետաքրքիր ճարտարապետությունը, կոլորիտն, ու այսօր էլ գորիսեցիները շարունակում են լինել հոգեւոր եւ մշակութային ժառանգության կրողն ու շարունակողը: Եվ այս կառույցն ամբողջացնում է քաղաքի կոլորիտը: Կառույցը նաեւ միասնության խորհրդանիշ է եւ այն կայմ է առել բազմաթիվ գորիսեցիների հովանավորության շնորհիվ:

Եվ հուշարձանի մոտ Գորիսի դիալոգների պատանեկան խումբը թնդացնում է երկինք ու երկիր եւ ասես ի լուր ամենքի ազդարարում՝ Գորիսը մշակութային մայրաքաղաք է: Մասնակալներ գերազանցիկ կատարումն օրը դարձնում է հոգեթով, իսկ տղեկները հայկական «Բերդ» պարն են բեմադրում՝ ի ցույց դնելով մեր ժողովրդի աննկուն կամքն ու հզոր ոգին: Իսկ օրը Գուսան Աշոտի երգերով սկսած շարունակում է իր ընթացքը Աշոտի սիրո երգերով արթնացած եւ սիրով լցված մարդկանց ասես ճանապարհում է միջոցառման հաջորդ կանգառը: Իսկ այն Սերո Խանգաղյանի տուն- թանգարանն է, որ վերջապես գտնվում է իր անվանը համապատասխան վիճակում. այն արդեն կահավորվել է գրողի անձնական իրերով: Տուն- թանգարանի առաջին հարկում կատարվեց սրճարան-գրախանութի բացումը:

Օրը հազեցած է բազմաթիվ միջոցառումներով: Իսկ ժամը 17-ին Քարահունցում ավանդական թթի փառատոնն է: Թուրք թափելու մրցույթ է հայտարարվում: Եվ թուրք՝ քաղցր ու մեղրածոր, թափվում է շորի մեջ, որի ծայրերը բռնել են նաեւ հյուրերը՝ տարբեր երկրներից: Եվ թուրք թափվում է ու թափվում, ինչպես տեղատարափ անձրեւ եւ ուր ասես պատահի՝ հյուրերի մազերի մեջ, նրանց ուսերին, մարդկանց հայացքների մեջ... Եվ օրը թթահամ է, թթաբույր ու դեռ Քարահունցի հանրահայտ օդին չխմած՝ մարդիկ արդեն հարբել են, հարբել են բարուց ու սիրուց, որն այդ օրը տարբեր ազգերի ներկայացուցիչներին «բաշխվեցին» ամխնայաբար: Ու կրկին պարահրապարակ են դուրս գալիս տղաների եւ աղջիկների խմբերը, երգիչներն ասես մրցման մեջ են մտել ձորի թռչունների հետ. նրանք էլ իրենց հերթին են ողջունում փառատոնի մասնակիցներին իրենց գեղգեղանքով: Քարահունցեցի տատիկն ու պապիկն էլ ասելիք ունեն՝ Աստված մեր թամահից կտրի ու մեր սերուխայնը տա...

Սեր հայրենակից Մարտիկ Գասպարյանը գորիսեցի մի խումբ մանկավարժների, բժիշկների, լրագրողների, մանկավարժների, գյուղատնտեսության, շինարարության, արվեստի ոլորտի աշխատողների ունեցած վաստակի համար շնորհակալագիր հանձնեց միջազգային մշակույթի ակադեմիայի կողմից:



մից:

2018թ. հուլիսի 7-ի երեկոն ուրիշ էր Գորիսը: Լուսային էֆեկտների շնորհիվ Լաստի խութն ու մերձակա ժայռերը դարձել էին հեքիաթային, եւ հեքիաթ էր հյուսվում ԱՊՀ-ի մշակութային մայրաքաղաք Գորիսում: Հանդիսավոր պահ է Գորիսն ընդունում է մայրաքաղաքի տիտղոսը: ԱՊՀ-ի սիմֆոնիկ նվագախմբի կատարումներն ասես շնորհավորանք են գորիսեցիներին՝ մայրաքաղաքի կոչմանն արժանանալու առիթով: Ու շփոթ է, սակայն հյուրերը եւս չեն ուզում տուն գնալ, ուզում են վայելել ամառային Գորիսի բոլոր երանգներն ու նվագները: Իսկ աստղազարդ երկինքը թրատվում է հրավառությունից:

Հազեցած էր նաեւ հուլիսի 8-ի միջոցառումների ցանկը: Անկախության հրապարակում «Հին եւ նոր Գորիս» գիրք-ալբոմի շնորհահանդեսն է, ԱՊՀ-ի անդամ երկրների ազգային պարերի բացօթյա ֆլեշմոբ է՝ Վահե Մելքոնյանի ղեկավարած «Սյունիք» պարային համույթի կողմից: Ու կրկին ու կրկին «Սյունիք» պարային համույթն իր կատարումներով հիացրեց-գարնացրեց բոլորին: Եվ հյուրերն էլ իրենց տարբեր մեջ մտան՝ պարում են իրենց ազգային պարերը հրապարակում երեխաների հետ: Եվ հետաքրքիրն այդ օրը նաեւ այն էր, որ հյուրերը մի լավ ջրվեցին գորիսեցի երեխաների կողմից, չէ՞ որ Վարդավառ էր: Եվ հյուրերը սելֆի արեցին իրար վրա ջուր ցողոլ մարդկանց ֆոնի վրա:

ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի կոչում ստանալու միջոցառումների շարքում ուրույն տեղ գրավեց գորիսյան հյուրասիրությունը: Մինչ այդ նրանք եղան Ակսել Բակունցի տանը, ունկնդրեցին Գորիսի հիմնը, որի բառերը գրել է Տիգրան Գրիգորյանը, երաժշտությունը՝ Արա Գեւորգյանը:

Բակունցի տուն- թանգարան կազմակերպած այցից հետո Անկախության փողոցում սկսվեց գորիսյան հյուրասիրությունը: Ամեն տան մոտ սեղան-սփռոց է բացվել: Էստի համեցեք, էստի համեցեք... Չէ, չսխալվեք, կանչող-հրավիրող թուրմանյանի Գիթորը չէ, գորիսեցիներն են, ովքեր հյուրերին լավ պատվելու-հարգելու աստվածատուր շնորհք ունեն: Ու այնպիսի կենցաղներ կառաջարկեն, որ չխմողն էլ կխմի:

- Տարբեր ազգերի ներկայացուցիչներ էին,- պատմում է Արթուր Մաշուրյանը,- առաջարկեցի մեր տան արդար օղուց խմել, հրաժարվեցին: Ես ձեզ բաց չեմ թողնի, մինչեւ չխմեք, ասացի ինքս ինձ եւ իմ ու նրանց բաժակները լցնելով ռուսերեն լեզվով՝ ասացի՝ խմե՛ք ազատ, անկախ հանրապետությունների բարեկամության կենցաղը: Բաժակ բաժակի զարկեցին ու խմեցին:

- Սյունեցիների հյուրասիրությունը դարերից է գալիս, նրանք հյուրասիրության հիանալի մշակույթ ունեն, սյունեցիք հացով ժողովուրդ են : Սյունեցիների կենցաղը: Նրանց տաշտը թող միշտ հացով լիքը լինի, տան դուռը միշտ բաց հյուրերի համար, - ասում է Սյունիքի մարզպետ Կարեն Յանբարձույանը:

Լիոնի փոխքաղաքապետ Լեւոն Սաքունցն էլ թե՛

- Գորիսը միշտ ժպտաղեմ է, հյուրասեր, մեր քաղաքապետը պիտի գար, նա ափսոսում է, որ չկարողացավ տեսնել գորիսեցիների ուրախությունը, որովհետեւ մեզ մոտ ջազի փառատուն է : Նրա կողմից շնորհավորում են գորիսեցիներին՝ 2018թ. ԱՊՀ մշակութային մայրաքաղաքի տիտղոսին արժանանալու համար:

-Գորիս,- լսվում է համերգավարի ծայրը, եւ հայերի հետ յարխուշտա են պարում նաեւ հյուրերը՝ տաջիկներն ու ռուսները, ղրղզներն ու բելոռուսները, թուրքմեններն ու ղազախները, մոլդովացիները: Բոլոր -բոլորը: Իսկ Գուսան Աշոտի տան մոտ Գուսանի անունը կրող համույթն իր կատարումներով օրը դարձրել էր հոգեթով ու անկրկնելի:

Վարդան Կարապետյանն էլ իր տան մոտ իսկական երկրագիտական թանգարան էր բացել. հին կահ-կարասիներ, սեղան-աթոռ, ռադիոընդունիչ, ինքնաեռ, հաց թխելու պարագաներ... Այսպես են գորիսեցիները՝ զարմանահարաշ ու մարդկային: Մխիթար Սպարապետի անվան հրապարակում ձեռքի աշխատանքների, նկարների ցուցահանդես է, ուր ցուցադրված են նաեւ Գորիսի արվեստի դպրոցի սաների աշխատանքները: Ու նաեւ լարախաղացն է դյուբում հյուրերին:

Հուլիսի 7-ին եւ 8-ին Գորիսը դարձել էր աշխարհի կենտրոնը, բոլոր ճանապարհները Գորիս էին տանում: Եւ Գորիսն աշխարհին ուղերձ հղեց՝ մարդիկ սիրեք միմյանց, սերը կիրկի աշխարհը կործանումից:

Գորիսը երկու օր շարունակ սիրո ու բարության, համերաշխության, համամարդկային արժեքների կենտրոն էր դարձել, սիրո եւ բարության խորհրդանիշ է:

-Գորի՛ս,-լսվում է համերգավարի ծայրը:

Գորիս, այսինքն, տաք սեր ու բարություն, ջերմ օջախ, հայոց եռագույն ու գալիքվելու հենք եւ կամուրջ բարեկամության:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կապանի ավագանին առկախել է նախորդ իշխանությունների օրոք ԶՊՄԿ-ի օգտին կայացված որոշման իրականացումը

էջ 1
ԶՊՄԿ-ին՝ հանքավայրի շահագործման նպատակով: Այս որոշումը մեծ բողոքի ալիք բարձրացրեց նշված համայնքներում, մասնավորապես՝ Քաջարան գյուղում, որտեղ «գերակա հանրային շահի» տակ էր հայտնվել նույնիսկ գյուղի գերեզմանոցը:

2011-ի որոշումը հետագայում չի փոփոխվել կամ ուժը կորցրած ճանաչվել, սակայն, կարելի է ասել, նաեւ համայնքների բնակչության հակազդեցության պատճառով կյանքի չի կոչվել, փոխարենը 2015 թ. մայիսի 21-ին Հովիվ Աբրահամյանի կառավարությունը նմանատիպ մեկ այլ որոշում է կայացրել: Ընդ որում՝ այն տեղ-տեղ պարզապես արտագրված է 2011-ի որոշումից:

Գործադիրը 2015-ին որոշել է նույն գերակա հանրային շահի անվան տակ վերցնել Արծվաճիկ, Սեւաքար, Աճառան, Չափնի եւ Սյունիք գյուղերի 492 հա հողերը (պետական, համայնքային եւ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող): Ինչպես նկատելի է՝ այն անգամ կառավարությունը «ձեռք չի տվել» Քաջարան գյուղին, որը 2011-ին ամենահամառ դիմադրությունը ցույց տվեց:

Եթե 2011-ին իբր որոշման հիմքում դրված էին Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրն ու բացահայտի ընդլայնման հեռանկարները, ապա 2015-ին կառավարությունը, այս տողերը կրկնելուց զատ, նշել է նաեւ պոչամբարի մասին: Խոսքը Հայաստանի ամենամեծ՝ Արծվաճիկի պոչամբարի մասին է, որի հարեւանությամբ են գտնվում բոլոր հինգ գյուղերը: 2011-ի որոշմամբ այս համայնքների (բացի Քաջարանից) հողերը նույնպես նախատեսված էին պոչամբարի ընդլայնման համար, սակայն դրա անունը որոշման մեջ չկար:

«Ծրագրի արդյունավետ իրագործումը չի կարող ապահովվել առանց նշված սեփականության օբյեկտների օտարման, այն չիմնավորված վճատ չի պատճառում սեփականատերերին, քանի որ հանքավայրի շահագործման հետ կապված արտադրական կեղտաջրերի պոչամբարի ընդլայնման տարածքների ընտրությունն իրականացվել է՝ հաշվի առնելով սահմանված տեխնիկական նորմերը, մակերեսային (ռելիեֆ) առանձնահատկությունները,

այլընտրանքային տարբերակի բացակայությունը եւ ազդակիր համայնքների կարծիքները»,- կարդում ենք Հ. Աբրահամյանի կառավարության որոշման մեջ:

Սահմանվել է նաեւ, որ գերակա հանրային շահի տակ հայտնված հողամասերի ձեռքբերողները հենց նշված գյուղական համայնքներն են՝ ԶՊՄԿ-ի միջոցների հաշվին: Կառավարությունը հինգ համայնքի ղեկավարներին առաջարկել է 492 հա հողերը ձեռք բերելուց հետո փոխել դրանց նպատակային նշանակությունը՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր: Իսկ ավելի կոնկրետ՝ գործառնական նշանակությամբ դրանք դառնալու են արդյունաբերական օբյեկտների հողեր: Այսբանից հետո, ըստ որոշման, համայնքների ղեկավարներին թույլատրվում է հողերն առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրել ԶՊՄԿ-ին:

Քանի որ 2017-ին Կապանի տարածաշրջանի գյուղերը խոշորացվել ու միացվել են քաղաքին՝ դառնալով մեկ Կապան համայնք,

հիմա հենց վերջինիս համայնքապետարանն է կառավարության 2015 թ. որոշման կատարման պատասխանատուն: Բայց ստացվում է, որ ավագանին չի շտապում ընդառաջել նախորդ իշխանությունների ընդունած որոշման մեջ արված առաջարկին՝ փոխել հողերի կատեգորիան:

Ավագանու արտահերթ նիստի օրակարգում դրվել էր վերոնշյալ 5 գյուղից 3-ի՝ Արծվաճիկի, Սեւաքարի եւ Չափնիի հողամասերի կատեգորիան փոխելու նպատակով այդ գյուղերի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում նախատեսվող փոփոխություններին հավանություն տալու հարցը: Սա ավագանու անդամների քվեարկության արդյունքում հետաձգված 4 հարցից մեկն էր, մյուս 3-ը վերաբերում էին Արծվաճիկի Նոր ջուր թաղամասում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների 51 հա հողերին (բաժանված 3 հասցեի մեջ), որոնք առանց մրցույթի, կառուցապատման իրավունքով տրամադրվելու էին ԶՊՄԿ-ին:

hetq.am

Հարձակման է ենթարկվել «Այունյաց երկիր» թերթի խմբագիրը



Օգոստոսի 13-ին ժամը 18-45-ի սահմաններում, Սամվել Ալեքսանյանը «Այունյաց երկիր» թերթի խմբագրատան մուտքում, որ գտնվում է Կապան քաղաքի Շահումյան 20/32 հասցեի երկրորդ հարկում, ենթարկվել է ավազակային հարձակման:

Խմբագրատան դուռը բացելու ժամանակ, շենքի երրորդ հարկից վազելով իջել է մի երիտասարդ՝ դեմքը կիսափակ վիճակում եւ հարձակվել խմբագրի վրա:

Սամվել Ալեքսանյանը դիմել է դիմադրության, որից հետո ելուզակը վազելով փախել է դեպի շենքի մուտք:

Շենքի մուտքի մոտ այդ ժամանակ նստած են եղել մի քանի մարդ, ովքեր նույն շենքում մահացած մի անձնավորության հարազատներն ու մերձավորներն են եղել, ովքեր, հավանաբար, լսել են աղմուկ-աղաղակը:

«Այունյաց երկիր»

Հ.Գ.

Այունիքի մարզի դատախազի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանն օգոստոսի 14-ին հանձնարարական է իջեցրել ՀՀ ոստիկանության Կապանի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության մայրո Ղ. Սուրենյանին՝ նախապատրաստելու նյութեր ս. թ. օգոստոսի 13-ին «Այունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի վրա կատարված հարձակման վերաբերյալ:

Դե ինչ, հուսանք, որ գոնե այս անգամ ելուզակը եւ հանցագործության պատվիրատուն կբացահայտվեն, մանավանդ որ թուրք-ելուզակին շենքի միջնաջրից դուրս գալիս եւ փախչելիս տեսել ու նույնիսկ դեմ առ դեմ հանդիպել են տվյալ շենքի բակում հավաքվածները, որոնց թվում՝ ոստիկանության նախկին աշխատակից:

Հետաքրքիր մեկ այլ դիտարկում էլ արեց շրջանավարտը՝ խոսքը դարձյալ ուղղելով նախարարին. «Հետաքրքրվեք եւ կտեսնեք՝ այստեղ աղմուկարարությամբ զբաղվողներն արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դռներն են բախում՝ փորձելով այդպիսի զորք-ուզած զորքը զբաղեցնել: Նույն մարդիկ նույն կերպ էլ ժամանակին ՀՀ-ի դռներն էին բախել»:

Հիսուն փարի առաջ Գորիսում մեծ դժվարությամբ ու ջանքով ստեղծված բուհը կարող է եւ փակվել, եթե...

Հուլիսի 26-ին Գորիսի պետական համալսարան էր այցելել ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արայիկ Հարությունյանը՝ Այունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանի ուղեկցությամբ:

Նպատակը, ինչպես նշեց նախարարը, համալսարանում ստեղծված իրավիճակին ծանոթանալն էր:

Ինձ անընդհատ նամակներ, դիմումներ են գրում. մի կողմը մեկ կարծիք է հայտնում, մյուս կողմը՝ այլ կարծիք, եւ որոշեցի լինել տեղում ու լսել կողմերին, - ասաց նախարարը:

Այնուհետեւ ելույթ ունեցավ ԳՊՀ ղեկավար Արտյուշա Ղուկասյանը, ով ողջունեց նախարարի անդրամիկ այցը կրթության, ապա համառոտ տեղեկություններ ներկայացրեց իր պաշտոնավարման ընթացքում (2016թ. փետրվարից) բուհում կյանքի կոչված բարեփոխումների մասին:

Ռեկտորը մասնավորապես նշեց, որ կոլեկտիվի աշխատակիցների հիմնական մասը (մեկ-երկու բացառությամբ) իր գործով է զբաղված՝ բնականոն աշխատանքով:

Արտյուշա Ղուկասյանը, սակայն, մտահոգություն արտահայտեց մի շարք հարցերի առնչությամբ:

Առաջինը, անշուշտ, ուսանողական համակարգի կրճատումն է՝ պայմանավորված մի շարք հայտնի գործոններով: Առաջիկա տարիներին, հավանաբար, ուսանողների թիվը չի ավելանա 1000-ից: Այս տարի ուսուցման առկա համակարգում Գորիսի պետական համալսարան է ընդունվել 55 հոգի:

Ուսանողական համակարգի կրճատումը հանգեցնում է դասախոսական անձնակազմի եւ օժանդակ աշխատողների կրճատմանը, ֆինանսական խնդիրների առաջացմանը, որը ցանկալի չէ:

«ԳՊՀ որոշ աշխատողներ անընդհատ տարածում են անանուն նյութեր. դրանց միջոցով, նաեւ ֆեյսբուքյան կեղծ էջերով արատավորում կրթության» տասնամյակներով ձեւավորված բարի համբավը, - ասաց Արտյուշա Ղուկասյանը: **«Կան հարցեր, որոնք կարելի է լուծել առանց իրավապահ մարմինների միջամտության, առանց լարված վիճակ ստեղծելու, սակայն մի քանի հոգի բռնել են աղմուկարարության ճանապարհը եւ փորձում են կրթությանը ներքաշել կրթության հետ կապ չունեցող խնդիրների, ինչ-որ մարդկանց անձնական շահերի տիրույթ»:**

Վերջին շրջանում բուհում ստեղծված վիճակի պատճառների վերաբերյալ ուշագրավ բացահայտումներ հնչեցին մի քանի ելույթներում. նկատի ունենք ԳՊՀ գիտաբարտուղար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Թեհմինա Մարությանի, ԳՊՀ շրջանավարտ Նարե Հովհաննիսյանի, մաթեմատիկայի եւ ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու Արփինե Դիմուցի ելույթները (վերջինիս հնարավորություն չտրվեց մինչեւ վերջ ներկայացնել ձեռնարկը): Մասնավորապես՝ հնչեցին այն դասախոսների անունները, ովքեր Ռուսաստանի Դաշնությունում գտնվող ուսանողին զնախատականներ էին նշանակել եւ հիմա խոսում են օրինականության պակասից, հերքվեցին ոմանց պնդումները, թե համազգային վերջին շարժման օրերին Գորիսում ակտիվ դերակատարություն են ունեցել, նշեցին դեպքեր, երբ տեղական իշխանություններն ապօրինի միջամտություններ են կատարել բուհի առօրյային:

Հանդիպումը, կարելի է ասել, ի սկզբանե կառուցված էր մեկ ուղղվածությամբ եւ մեկ բանաձեւով. ղեկավար Արտյուշա Ղուկասյանը նշանակվեց «մեղավոր», ով էլ պետք է պատասխան տար տեւական ժամանակ բողոքող գործընկերների հարցերին, որոնց մեծագույն մասն անձնական էին եւ բուհական կրթության հետ որեւէ աղերս չունեին:

Կարելի է պատկերացնել, թե ինչ ընթացք է ավարտ կունենար հանդիպումը, եթե չլինեին ներկայների մեծ մասի ողջամիտ պահվածքը, ղեկավարի համբերատար ու բարեկիրք վարքը, եթե չլինեին իրենց իրենց անունով կոչելու միտված ելույթները:

Երկու մասի բաժանված լսարանը եւ իրարամերձ հարցերը չէին կարող չմտահոգել նախարարին, ով էլ ասաց. **«Մթնոլորտը, որ ձեզ մոտ կա, ակադեմիական չէ, գործընկերային չէ. բուհի տպավորություն չեն ստանում: Եվ հարցեր առաջա-**



դրելիս շատ հաճախ ելնում եք անձնական շահերից... Շատ են ցավում, որ փաստարկների փոխարեն անձնական հարցեր եք առաջադրում: Ձեր անձնական խնդիրները մի կողմ թողեք: Եթե այսպես շարունակվի, ապա պետք է լուծարել Գորիսի պետական համալսարանը եւ նոր բուհ ստեղծել Գորիսում: Այս մթնոլորտում աշխատել հնարավոր չէ»:

Ավելի ուշ, ըստ երեւոյթին, նախարարը մի փոքր նահանջեց արձանատակ այս դիրքորոշումից, ինչը, խոստովանեց, պայմանավորված էր Այունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանի դիրքորոշմամբ, ով մասնավորապես ասաց. **«Ինձ համար սոսա՛հ է այս վիճակը: Կողմերի միջեւ մեծ անդունդ է ստեղծվել: Ես ցավում եմ, չէի ցանկանա այդ ամենը տեսնել: Այս վիճակը պատիվ չի բերում Գորիսի պետական համալսարանին, նաեւ ամբողջ Այունիքին: Ինչ են հորդորում... Տանք հնարավորություն ե՛ւ ԳՊՀ ղեկավարությանը, ե՛ւ կոլեկտիվին՝ մինչեւ օգոստոսի 25-ը շտկել իրավիճակը: Այս մթնոլորտում բացառվում է ուսումնական նորմալ պրոցեսի կազմակերպումը:**

Փորձե՛ք ամեն ինչ հարթել եւ թողնել անցյալում ու նոր եւ մաքուր էջից սկսել»: Նախարարը հավանություն տվեց մարզպետի դիտարկմանը եւ ավելացրեց. **«Կան ակնհայտ թերություններ, որ պետք է վերացվեն անմիջապես: Կան հարցեր, որ մեր իրավաբանները կզան եւ տեղում կուսումնասիրեն ու ընթացք կտան: Իսկ եթե արդյունքում իրավիճակը փոխվի, ապա ես ուրախ կլինեմ»:**

Իհարկե, դժվար է հավատալ, որ մեկ ամսում եական ինչ-որ բան կփոխվի համալսարանում, սակայն համերաշխության վերականգնումը, փոխադարձ ներազանցության եւ վերավորվածության հարթահարումը հնարավոր է՝ մանավանդ որ նախարարն ամբաբայց ակնարկ արեց բուհը փակելու առկա սպառնալիքի մասին, ինչը պետք է մտահոգի յուրաքանչյուրին: Գորիսում բարձրագույն ուսումնական հաստատությունը ժամանակին ստեղծվել է մեծ ջանքերով՝ Այունիքի եւ մասնավորապես Գորիսի ռազմավարական դիրքը նկատի ունենալով, ուստի երբեք մեկն իրավունք չունի իր անձնական խնդիրներով վտանգի տակ դնել բուհի ճակատագիրը:

Գորիսում պետական բուհի ճակատագիրը հարցականի տակ դնողները նաեւ պիտի հիշեն, որ իրենց պահվածքով, իրենց՝ իբր սկզբունքային պահվածքի պատճառով պատասխանատու են ամբողջ Գորիսի, ինչպես եւ ներկա ու գալիք սերունդների առջեւ:

ԳՊՀ-ում ստեղծված վիճակի գլխավոր պատճառը, ըստ շրջանավարտ Նարե Հովհաննիսյանի, որոշ դասախոսների անձնական հարցերն են ու ամբիցիաները, շահերի բախումը: Տարիների ընթացքում այդ կոլեկտիվում բնավորվել են ընտանիքներ՝ ամեն ընտանիքից մի քանի հոգի՝ առանց պատշաճ գիտելիքներ ունենալու, առանց թափուր տեղերի համար պատշաճ մրցույթներ անցկացնելու: Եվ հիմա բոլոր բանավե-

ճերի հիմքում բարեկամական-ազգակցական կապերն են ու նրանց շահերը, կրթական որեւէ խնդիր կամ մտահոգություն չկա ներկա անձակատան հիմքում:

«Երբ որեւէ մեկը Գորիսի պետական համալսարանից հարց է բարձրացնում, ապա խորքում անպայման փնտրեք ազգակցական-բարեկամական, մասնավոր հետաքրքրություններ եւ ոչ կրթական շահեր, - այդպիսի խորհուրդ մեկնեց Նարե Հովհաննիսյանը նախարար Արայիկ Հարությունյանին:

Հետաքրքիր մեկ այլ դիտարկում էլ արեց շրջանավարտը՝ խոսքը դարձյալ ուղղելով նախարարին. **«Հետաքրքրվեք եւ կտեսնեք՝ այստեղ աղմուկարարությամբ զբաղվողներն արդեն «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության դռներն են բախում՝ փորձելով այդպիսի զորք-ուզած զորքը զբաղեցնել: Նույն մարդիկ նույն կերպ էլ ժամանակին ՀՀ-ի դռներն էին բախել»:**

Հանդիպման ընթացքում մամրանալու են քննարկվեց ԳՊՀ ղեկավարություն եւ բուհի արհիվոմի նախագահ հարաբերությունների հարցը:

Մի քանի ուսանողի էլ հետաքրքրում էր ուսման վճարի հարցում կիրառվող զեղչերի հարցը, որն իբր անարդար հիմքերի վրա է:

Հանգամանակից քննարկում եղավ համալսարանի ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների վերջին ընտրությունների, նաեւ համալսարանի ներքին իրավական ակտերի, որոշ դասախոսների՝ համալսարանից հեռանալու կամ հեռացվելու պատճառների մասին:

Դասախոսներից մի քանի հոգի քննադատական խոսք հնչեցրին նախորդ մարզպետ Վահե Հակոբյանի հասցեին՝ նրա գործելակերպը (իբրեւ բուհի կառավարման խորհրդի նախագահ) համարելով ստեղծված անառողջ մթնոլորտի պատճառներից մեկը:

Նա էր, ըստ բանախոսների, որ միջամտում էր կադրերի ընտրությանն ու տեղաբաշխմանը՝ ձգտելով իր անձի նվիրյալների տեղավորել բարձր պաշտոններում:

Նա էր, որ ֆակուլտետի դեկանների մեկին ազատելու հրահանգ իջեցրեց՝ նկատի ունենալով, որ դեկանը քանիցս հողվածներ է հրապարակել «Այունյաց երկրում»:

Նա էր, որ մի խումբ դասախոսների մեղադրում էր ՀՀ-ն ճախնարական գործերին չօժանդակելու մեջ:

Նա էր, որ մի քանի հոգու խոստացել էր նշանակել Գորիսի պետական համալսարանի ղեկավարի պաշտոնը ղեկավարող պաշտոնակատարին:

Նա էր, որ բուհը ներքաշեց խարդախների, քաղաքական մամր խաղերի մեջ՝ հետին պլան մղելով կրթության եւ գիտության հարցերը:

Գորիսի պետական համալսարանը կրթական առաքելությունից օտարելու եւ ներմարզային խաղերի սուբյեկտ դարձնելու նրա մոլուցքը, որ սկիզբ առավ 2017թ. Աժ ընտրությունների ժամանակ, նորանոր դրսևորումներ ստացավ Գորիսի ՏԻՄ ընտրությունների ընթացքում:

Եվ ահա բուհը բախվել է ամոթալի այդ ժառանգության հետ, որը չկարողացավ վերացնել ՀՀ ԿԳ նախկին նախարար Լեւոն Մկրտչյանը՝ երեք անգամ այցելելով Գորիսի պետական համալսարան:

Իսկ թե ինչ արդյունք կտան նոր նախարար Արայիկ Հարությունյանի, նոր մարզպետ Կարեն Համբարձումյանի եւ ղեկավար Արտյուշա Ղուկասյանի ջանքերը՝ ժամանակը ցույց կտա:

Տեսնե՛ք...

Ուշագրավ մի դիպվածի էլ ակնառու եղանք. «Չանգեզուր TV» կոչված էր եկել (առանց հրավերի ու առանց հավատարմագրման) լուսաբանելու նախարարի հանդիպումը, ինչը բուհի ղեկավարության կողմից առարկության արժանացավ. պահանջում էին հեռուստատեսադրոյան իրավունքը հավաստող լիցենզիա, որը դարձյալ չներկայացրին: Սակայն, նախարարության առաջարկով, ի վերջո, թույլատրվեց նրանց մասնակցությունը, բայց ղեկավարը այդպես էլ չհամաձայնեց պատասխանել այդ «լրատվամիջոցի» հարցերին:

Խանածախը խեղդվում է խնդիրների ծովում



Տեղ-Ստեփանակերտ ավտոճանապարհը փակողների մեջ էին նաեւ Տեղ համայնքի Խանածախ բնակավայրի ներկայացուցիչները: Ճանապարհի բացումից հետո նրանք Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանին խնդրեցին այցելել Խանածախ՝ տեղում խնդիրներին ծանոթանալու համար: Մարզպետը համաձայնեց:

Խանածախցիները մարզպետին խորհուրդ տվեցին՝ Խանածախ գնալու համար չօգտվել իր ծառայողական մեքենայից՝ հաշվի առնելով ճանապարհի անբարեկարգ վիճակը: Մարզպետը նստեց նրանցից մեկի «Նիվա» մակնիշի մեքենան՝ առաջացնելով ներկաների զարմանքը: Մարզպետը «Նիվա» մեքենայով... Ու դեռ ավելին. մարզպետը նստեց մեքենայի դեկին՝ ասելով՝ դուք ճանապարհը ցույց տվեք, ես այսպես ավելի լավ կհմանամ ճանապարհի վիճակը:

Իսկ Խանածախում տարիներով կուտակված կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ խնդիրներ կան, եւ դրանց լուծումից է կախված բնակավայրի հետագա ծակատագիրը:

Մարզպետի այցի մասին Խանածախցիներն արդեն իրազեկ էին: Մեծ ու փոքր, կին ու տղամարդ հավաքվել էին բնակավայրի ակունքի բակում՝ հնարավորություն ունենալով բարձրածայնելու իրենց հիմնախնդիրները եւ «առաջին ձեռքից» իմանալու դրանց պատասխանը:

Խանածախցիների համար խնդիրների խնդիրը մնում է խմելու ջուրը: Այդ խնդիրը երկար տարիներ չարչրկվածներից է, որի վերջնական լուծումը դեռեւս տեսանելի չէ, եւ այդ հարցում կուսմտիկ լուծումները երբեք չեն կարող տանել վերջնական հանգրվան:

Խանածախցիների համար ջրի հարցը սրվում է հատկապես ամռանը, որովհետեւ այլ գործոնների հետ մեկտեղ առաջ է գալիս նաեւ մարդկային գործոնը. որոշ Խանածախցիներ իրենց տնամերձերը ոռոգում են խմելու ջրով:

-Բացի դրանից,- ասում է մի Խանածախցի,- կան մարդիկ, որոնց ջրի խողովակաշարի տարողունակությունը մեծ է, այդ նույն հաստության մեկ այլ խողովակաշարից օգտվում են տասնյակ տնատիրություններ, եւ, բնականաբար, ջրի սով է առաջանում: Սյուն էլ թե՛ ամեն տարի էլ են գնում ջուր կրելու համար, մի էլը հազիվ մի տարի է դիմանում: Երրորդն էլ թե՛ այնքան ջուր են կրել ձեռքով, որ ձեռքերս երկարել-հասել են զետեմին:


Ինչպե՞ս հիմնովին լուծել ջրի հարցը: Խանածախցիները շատ տարբերակներ են առաջարկում՝ ընդհուպ մինչեւ հարեւան Վաղատուր, Խոզնավար բնակավայրերի աղբյուրներից խողովակներով Խանածախ ջուր հասցնելը:

Որոշվեց՝ կազմել մասնագետների խումբ, որը տեղում կուտումնասիրի իրավիճակը, իսկ դա հնարավորություն կտա ճիշտ առաջարկություն մշակել՝ բնակավայրը ջուր հասցնելու եւ ընդմիջտ խնդրահարույց հարցը լուծելու համար:

Գյուղում հարցերի հարց է մնում նաեւ տների գազիֆիկացումը: Գազը հասել է բնակավայր, սակայն 200 տնատիրությունից օգտվում է միայն 15-ը: Տների գազիֆիկացումն այդտեղ թանկ հաճույք է ասում են Խանածախցիները: Դրա համար անհրաժեշտ է 400 հազարից մինչեւ 500 հազար դրամ: Գումար, որ ոչ բոլորն ունեն: Նրանք մարզպետին խնդրեցին հնարավորություն գտնել գազիֆիկացման համար անհրաժեշտ գումարները նվազեցնելու համար: Գազիֆիկացմանը խոչընդոտում է նաեւ մի այլ հարց. շատ-շատերը չունեն իրենց տների սեփականության իրավունքի վկայականը, որի ձեռք բերելը, ըստ նրանց, մեծ գումարների հետ է կապված:

Մարզպետը խոստացավ իր լիազորությունների, հնարավորությունների սահմաններում լուծել Խանածախցիներին հուզող ճանապարհի, խմելու ջրի, գազիֆիկացման, սեփականության իրավունքի վկայականների ձեռք բերման հարցերը՝ ամենասեղմ ժամկետներում:

Ավարդ Մետրոպյան



Թեև Վահեն դուրս է քշվել մարզպետարանից, բայց մեզանից չի կարող արձնել, քանի դեռ...

Յուրի 5-ին մարզկենտրոն այցելած եւ բնակչության հետ հանդիպած Նիկոլ Փաշինյանը կապանցիներին համար երկար սպասված հայտարարություն արեց. «Ես ձեզ խստաճանաչ եմ, որ շատ արագ ֆուտբոլը կվերադառնա Կապան»:

Չափազանց կապանցիներ բուն ծափահարություններով արձագանքեցին վարչապետի հայտարարությանը:

Ինքս էլ, նաեւ ֆուտբոլասեր հայրենակիցներին անունից, շնորհակալություն եմ հայտնում Չայաստանի Չանրապետության վարչապետին:

Այդ ամենից հետո, կամա-ակամա, մտովի հայացք եմ ձգում կապանյան ֆուտբոլի համրեպ վերջին տարիներին դրսևորված հանցավոր վերաբերմունքին, դրա հետևանքներին:

Վահեի պատճառով տարւ տարով ֆուտբոլը հետ ընկավ Կապանում:

Չայաստանի ֆուտբոլի առաջնության բարձրագույն խմբում կապանցի ֆուտբոլիստ չկա. նախկինում մոտ տասը խաղացող ունեինք այնտեղ:

Առաջին լիգայում երկու կապանցի է մնացել:

Պատանեկան թիմում խաղացողներին 7-8 տարի է պետք, որ կարողանան մտնել առաջին կամ բարձրագույն լիգա:

Բազմաթիվ ֆուտբոլասեր կապանցի երեխաներ էլ տեղափոխվել են Երեւան կամ Ռուսաստան՝ այնտեղ պարապելու համար, քանի որ իրենց ծննդավայրում ֆուտբոլն արգելված էր տեղական իշխանությունների կողմից:

Եվ այդ ամենը՝ ինչ-որ Վահեի կամայակալությունների, անձնական հաճույքների հետևանքով:

Քանիցս եմ ասել՝ նրա մոտ ցնիզմը սահման չունի. իր մերձավորների միջավայրում է բազմիցս հայտարարել, թե զումար եմ տվել, որ թիմը Կապանից հանեմ, որ Կապանի մարզադաշտը որակագրվեմ...

Ո՛ւմ է կաշառել այդ անօրենը, որ ֆուտբոլը դուրս հանի Կապանից:

Նաեւ պատճառաբանել է, թե եւ՝ իր համար, եւ՝ ֆուտբոլիստների համար, էկոլոգիական տեսակետից, Կապանը թունավոր միջավայր է՝ նկատի ունենալով Արծվանիկի պղծամբարը: Ու դրա համար էլ եւ՝ ինքը, եւ՝ ֆուտբոլիստները չեն կարող ապրել ու խաղալ Կապանում:

Դրա համար էլ օրերով փախչում էր աշխատանքից:

Նաեւ ֆուտբոլի հանդեպ ունեցած քմահաճ վերաբերմունքով էր երեւում նրա արհամարհանքը տեղացիներիս հանդեպ: Իրականում տեսնել չէր ուզում կապանցիներիս, ինքը գեղի լինելով՝ մեզ էր գեղի անվանում...

Ապրիլ- մայիսյան օրերին քանի- քանի անգամ փորձեցի նրան բռնել ու պատասխան պահանջել, բայց միշտ էլ հաջողեց մեքենայով փախչել...

Սակայն դրանով նա չի պրծել: Թեև հեռացվել է պաշտոնից, բայց պատասխան չի տվել դեռ:

Ինքը պետք է պատասխան տա ֆուտբոլը Կապանում վերացնելու համար:

Ինքը պետք է թալանածը հետ բերի:

Սյունիքում նա շատ լկտիություններ թույլ տվեց, հանցանքներ գործեց, որոնցից մեկը ֆուտբոլի հանդեպ դրսևորած ստոր վերաբերմունքն էր:

Միայն օտարը, միայն թշնամական տրամադրությամբ լեցուն մարդը կարող էր նման բան անել Կապանի հանդեպ: Եվ ինքը հենց այդ օտարն էր...

Մի հարցնող լինի՝ եթե Կապանի օղջ թունավոր է, ու ինքը չի կարող ապրել Կապանում, ապա ինչպե՞ս ապրեն այստեղ կապանցիները:

Մի՞թե Կապանը նրա համար ժամանակավոր վայելքների, հարստություն դիզելու քաղաք էր սոսկ:

Փա՛ռք Աստծո, որ մարզպետը հիմա սյունեցի է: Սպասում ենք, որ Կապանի համայնքապետն էլ մի նորմալ անձնավորություն կլինի:



Եվ բոլորս միասին, վարչապետի նշած հավաստիացումից հետո, կծգտենք վերականգնել Կապանի ֆուտբոլային համբավը: Ու ստիպված չենք լինի նորից փակել Կապանով անցնող միջպետական ճանապարհը կամ շրջափակել Արծվանիկի պղծամբարը...

Դրանից առաջ, մինչդեռ, պատասխան պետք է տա նաեւ Չայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Չայրապետյանը: Չլինել նրա առեղծվածային պահվածքը, Վահեն նման լկտիությամբ չէր հարձակվի Կապանի ֆուտբոլի վրա:

ԳՎԳԻԿ ՕՅԱՆՉԱՆՅԱՆ
13-ը հուլիսի 2018թ.

Պաշտոնանկություններ, որոնք ըստ էության պարճառաբանված չեն



ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դավիթ Անանյանի 2018թ. օգոստոսի 10-ի հրամանով պաշտոնից ազատվել է ՀՀ ՊԵԿ-ի Հարավային մաքսատուև վարչության պետ Աշոտ Մինասյանը: Դավիթ Անանյանի նույն օրվա մեկ այլ հրամանով մաքսային ծառայության պաշտոնից ազատվել է ՀՀ ՊԵԿ-ի Հարավային մաքսատուև վարչության Մեղրիի մաքսային կետ-բաժնի պետ Սամվել Հայրապետյանը:

հայոց պետականաշինությանն ու բանակաշինությանն անուրանալի նպաստ բերած գործիչ, նահատակված հարազատ եղբոր արյամբ մեր անկախության հիմքերը յուրովի ամրացրած անձնավորություն:

Այնպես որ՝ նրան ազատելիս պատշաճ կլինեք մատնանշել իրական ու հավատ անբշնչող պատճառները, ինչը եւ կցրեք շատերիս համակած խորհրդավորությունը: Նույնը կարող ենք ասել Սամվել Հայրապետյանի պաշտոնանկության առիթով, որի քաղաքացիական, մարդկային, բարոյական նկարագիրը միայն դրվատանքի է արժանի: Անզեմ աչքով անգամ կարելի է տեսնել, թե Մեղրիի մաքսային կետ-բաժնում ինչ փոփոխություններ են կատարվել նրա պաշտոնավարման շրջանում եւ քաղաքացիների սպասարկման ինչ մակարդակ էր ներդրվել այստեղ:

Եվ քանի դեռ պաշտոնապես հանրայնացված չեն այդ պաշտոնանկությունների՝ հավատ անբշնչող պատճառները՝ տարակույսները շարունակում են թեւատել սյունիքյան համրության մեջ:

Եվ, այդուհանդերձ, Աշոտ Մինասյանին ու Սամվել Հայրապետյանին ցանկանում ենք հաջողություններ, հիշեցնում գլխավորը՝ դուք դեռ անելիք եւ ասելիք ունեք Սյունիքի մարզում:

«Սյունյաց երկիր»

Մեր Անդրեասյանը՝ Մեղրիի մաքսային կետի պետ

Մեր Անդրեասյանը ծնվել է 1968 թվականի փետրվարի 12-ին Կարճեւան գյուղում : Սովորել է Կարճեւանի հիմնական դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Ազարակի միջնակարգ դպրոցում:

1984 թվականին ընդունվել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիան (այժմ Հայաստանի ազգային ագրարային համալսարան):

1986-1988թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1996 թվականից առ այսօր աշխատում է մաքսային համակարգում:

Ամուսնացած է, ունի երկու որդի: **Հարգելի պարոն Անդրեասյան** Ի սրտե շնորհավորում ենք Ձեզ՝ Մեղրիի մաքսային կետի պետի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ, մաղթում ենք ամուր առողջություն, հաջողություններ առաջադրված նպատակներին հասնելու գործում՝ ի շահ Հայաստանի Հանրապետության, ի բարօրություն հարավային դարպաս Ազարակի: Վստահ ենք, որ այդ բարձր ու պատասխանատու պաշտոնում



Կներոնք Ձեր ողջ ծառայողական փորձն ու ներուժը՝ հարավային սահմանն ավելի ամուր պահելու ու ծառայած խնդիրներին արժանապատվորեն դիմագրավելու համար:

Ս. Առաքելյան

Հոբելյանական ցուցահանդես

Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղում օգոստոսի 17-ին բացվեց գեղանկարիչ Սարգիս Մանգասարյանի (1918-1991) ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, որ նվիրված էր արվեստագետի 100-ամյա հոբելյանին: Ցուցադրանքում գեղանկարչի երեք տասնյակից ավելի բնանկարներ եւ դիմանկարներ էին: Բացելով ցուցահանդեսը՝ մասնաճյուղի տնօրեն Բորիկ Մինասյանը նշեց, որ Սարգիս Մանգասարյանի ստեղծագործական ակունքները տանում են անցյալ դարի 30-ական թվականները, առաջիններից մեկն է եղել, ում ղափանցիները ճանաչել են որպես գեղանկարիչ:

կան ցուցահանդեսների: Իր բեղուն գործունեության շնորհիվ նրան շնորհվել է Հայաստանի վաստակավոր նկարչի կոչում: Ցուցահանդեսին մասնակցում էին արվեստասեր կապանցիներ, գեղանկարչի հարազատներն ու համադրուհիները: Գեղանկարչի ավագ որդին՝ Տիգրան Մանգասարյանը ներկաներին հայտնեց, որ ցուցահանդեսի համար ընտրել են այնպիսի աշխատանքներ, որոնք ուղղակիորեն առնչվում են Կապանին եւ գեղանկարչի ծննդավայր Վաչագան գյուղին. «Թեև բազմազբաղ լինելուն եւ հագեցած ու լարված առօրյային, հայրիկը չէր մոռանում Վաչագան գյուղը, հայրական տունը, իր համադրուհիներին: Մանավանդ կյանքի վերջին տարիներին առիթը բաց չէր թողնում զալ Վաչագան, անընդհատ նկարում էր, այնպես չէր, որ գալիս էր հանգստանալու կամ գրասենյակում, ինչի շնորհիվ ստեղծվեցին այս գործերը: Կարծում եմ՝ ապագայում առիթ կլինի, որ հայրիկը կապանցիներին ներկայանա ավելի մեծ ցուցահանդեսով»: Տիգրանի կինը՝ նկարչուհի Աննա Համբարյանն ասաց, որ շատ է ավիստում, որ կյանքում չի հանդիպել նկարիչ Սարգիս Մանգասարյանին, բայց նրա մասին շատ է լսել, իսկ նրա ստեղծած նկարները պատմում են Սարգիս Մանգասարյան անհատի եւ նկարչի մասին:

Ի դեպ, Սարգիս Մանգասարյանը տարիներ շարունակ նկարել է Վաչագանի նահապետների, տարեց մարդկանց դիմանկարները եւ հարազատ գյուղի բնանկարները, որի մի մասը նվիրել է հայրենի գյուղին, դրանք մշտական գրանցում են ստացել Վաչագանի հանդիսությունների սրահում:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Բժշկուհի Ռայա Ադամյանը...

Ստիր ցանկացած գործեսու տուն եւ բժշկուհի Ռայա Ադամյանի անունը տուր: Ժպտալ կտեսնես բոլորի դեմքին, ուրախութիւն, միաժամանակ՝ հպարտութիւն: Ու միաբերան բոլորն այսպէս են արտահայտուում նրա մասին՝ բժշկուհին կանանց Աստուածն էր: Այսինքն, կանանց համար Աստուած հետո՝ նա էր՝ Ռայա Ադամյանը, գինեկոլոգ բժիշկ Ռայան: Հիպոկրատի երդվալը, ով դժվարին պահին, մինչ արյան փոխներարկման կայանից արյունը կհասցնէին, մտել է սեփական երակը, սեփական արյունը ներարկել հիվանդին ու իր արյունով երկու մարդու կյանք փրկել: «Ու թե ոսկե ձեռքեր անվամբ մրցանակաբախչություն լիներ, չենք կասկածում, բոլորը բժշկուհի Ռայայի օգտին կքվեարկեն», -ասում են կանայք ու տղամարդիկ: Ու նաեւ նրանց երեխաները: Տասնյակ երիտասարդ տղաներ ու աղջիկներ մոտեցել-մոտենում են նրա տղաներին (գործի բերումով). տղաներից Արթուր Առաքելյանը Գորիսի արյան փոխներարկման կայանի ղեկավարն է, Արամ Առաքելյանը՝ քաղաքում հայտնի ատամնաբույժ, եւ ասում են բժշկուհի Ռայայի փրկած աղջիկն են, նրա շնորհիվ լույս աշխարհ եկա, 2-րդն էլ ասում է՝ հայրս ու մայրս ինձ չէին ուզում, բայց բժշկուհին երկու ոտքը դրեց մի չմշկում՝ չեն ընդհատի հողիությունը. այդ ընտանիքում վեց երեխա կար: Հիմա նրանք բոլորն էլ ապրում են արտասահմանում: Միայն ծնողներն «չուզած» երեխային չզայթակղեց արտասահմանը, մնաց ու նրանց ծերութեանը հիմա նա է նեցուկ: Ու ծնողները չեն մոռանում ամեն օր իրենց շնորհակալությունը հայտնել բժշկուհուն եւ փառք տալ Աստուծուն, որ իրենց հանդիպեցրեց Ռայա Ադամյանին:



Ռայա Ադամյանից հետո Գորիսի հիվանդանոցը հիմնանորոգվել է : Այդտեղ ոչ մի բան չի հիշեցնում նախկին հիվանդանոցը: Բայց զարմանալիորեն Ռայայի աուրան զգացվում է, նրա ներկայությունը՝ նույնպէս : **-Մեզ թվում է՝ ուր որ է կհայտնվի բժշկուհին՝ բարի, գեղեցիկ ժպիտով, հունոր կանի եւ կմտնի հիվանդասենյակներ, բուժքույրերն են պատմում:**

-Ես շատ եմ սիրել բժշկուհի Ռայային, - ասում է հիվանդանոցի մանկաբարձագինեկոլոգիական բաժնի բժշկուհի Կարինե Յոլյանը, - **եւ այդ սերը փոխադարձ էր, անշահախնդիր: Նա շատ զարգացած կին ու բժշկուհի էր: Եղել է իմ ուսուցչուհին՝ բոլոր առումներով: Բժշկուհին նաեւ լավ երգում էր, հատկապէս Գուսան Աշոտի երգերը: Մեզ ստիպում էր սովորել երգել Գուսանի երգերը, որ կուղեկոչվի միջոցառումների ժամանակ միասին երգենք: Բժշկուհի Ռայան էլ բժիշկ Արտաշէսը հիանալի դուետ էին: Միշտ միասին էին երգում Գուսանի «Ծով աստղիկ», «Էն գարնան» երգերը:**

Ու հիշում են բժշկուհու Արամ որդու խոսքերը՝ մի անգամ Գուսան Աշոտը լսեց մորս կատարումը: Լսեց ու ասաց՝ **ախպոր աղջիկ, հասարակության մեջ «Էն գարնան» երգը երգելու բացառիկ իրավունքը քեզ եմ տալիս :**

- Բժշկուհի Ռայան հումորով կին էր: Լուրջ խոսքն անգամ հումորով էր ասում, հիվանդների հետ էլ հումորով էր խոսում, ասելով՝ սա առաջին բուժօգնությունն է հիվանդին: Տանն էլ նույնն էր, բժշկուհի Ռուզան Մարտիրոսյանն է պատմում:

Բժշկուհի Ռուզանից շարունակում է բժշկուհի Կարինեն՝ **Ռայա Ադամյանը պատմում էր՝ մի օր ասացի՝ Գարեգին, գո՞հ ես, որ քո կինն եմ:**

-Ինչ լավ բան տեսել եմ, քեզանից եմ տեսել, - ասաց ամուսինը:

Ռայան էլ թե՛ բա տես ես քեզանից գո՞հ եմ:

Բժշկուհուն գիշերը կանչել էին հիվանդանոց: Գործն ավարտելուց հետո հոգնած գնում է տուն եւ քնում:

Ամուսինը նկատում է, որ երեխաները վերմակը մի կողմ են քաշել: Արթնացնում է կնոջն եւ դժգոհում՝ երեխաները կմրսեն: Ռայան էլ, որ խոսքի տակ մնացող չէր, տարավ ու բերեց, թե՛ Գարեգին, երեխաների 50 տոկոսն իմն է, 50 տոկոսը՝ քոնը: Դու քո 50-ին ծածկիր, իմ 50-ի հետ գործ չունես:

Պատմում են, որ հիվանդանոցում մի բժիշկ կար, ով իր կարմիր դիպլոմով շատ էր

հպարտանում: Պատեհ-անպատեհ առիթով ասում էր՝ կարմիր դիպլոմով եմ ավարտել: Այնպէս պատահեց, որ կարմիր դիպլոմավորի հիվանդը հայտնվեց ծայրահեղ ծանր վիճակում: Բուժքույրը բացեց բժշկուհի Ռայայի աշխատասենյակի դուռը եւ ասարսփահար ասաց՝ բժշկուհի, հիվանդը մեռնում է, հասե՛ք: Բժշկուհին գիտեր, թե խոսքն ում հիվանդի մասին է, հորդորեց՝ գնա նրան ասա՛ թող իր կարմիր դիպլոմը դեմ տա մահվանը, ու գնաց փրկելու հիվանդին: Հիվանդը նրա շնորհիվ կյանք վերադարձավ: Ու բժշկուհի Ռայան միշտ հաղթում էր եւ ասում Համո Սահյանի խոսքը՝ մահն ո՛ւմ չունն է, որ...

Ռայա Ադամյանի աշխատելու տարիներին Գորիսի հիվանդանոցի մանկաբարձագինեկոլոգիական բաժնում արհեստավարժ բժիշկների մի բույլ էր աշխատում՝ բժշկուհիներ Սեդան, Սաիդան... Մասնագիտական նախանձ չկար նրանց մեջ: Քո հիվանդը բոլորինս է, բոլորիս հիվանդը՝ քոնը: Այս սկզբունքով են աշխատել այդտեղ: Ու ձեռք ձեռքի տված՝ հազարավոր ընտանիքների ուրախություն են պարգևել: Միայն բժշկուհի Ռայան իր աշխատանքային 40 տարվա ընթացքում Գորիսի, տարածաշրջանի գյուղերի, Վայոց ձորի, Արցախի 10 հազար ընտանիքի երեխա է պարգևել, միլիոն անգամ օրինանքի ու շնորհակալանքի խոսքեր լսել իր հասցեին: Պատահել է մի գիշերվա ընթացքում երեք անգամ զանգել են հիվանդանոցից: Առանց տրտնջալու գնացել է եւ ոսկե ձեռքերի շնորհիվ նոր լույս պարգևել ընտանիքներին: Հիշում են բժշկուհու խոսքը՝ մի օր ասացի՝ Գարեգին, ես արեւ եմ դարձել, դու՛ լուսին, իրար չենք համոզիվում:

Իսկ բժշկուհու ամուսինը՝ Գարեգին Առաքելյանը, աշխատում էր կուսակցական ապարատում, եղել է Գորիսի քաղաքապետի նախագահը: Գործի բերումով նա էլ մշտագբաղ մարդ էր:

Որտե՞ղ են ծանոթացել ծնողները հարցին, Արամ որդին պատասխանեց.

- Մայրս շատ ակտիվ, գեղեցիկ կին էր, հաճախ էր մասնակցում ակտիվի ժողովներին, կոմկուսի պլենումներին, հայրս այդտեղ էլ հանդիպեց նրան, հայրս էլ բարձրահասակ, գեղեցիկ տղամարդ էր, հպարտությամբ ասում է Արամը, - եւ ամուսնացան:

Նրանք ունեցան երեք զավակ, երկու տղա ու մի աղջիկ: Բժշկուհին չէր ցանկանում, որ երեխաներն իր ունահետքերով գնան, բայց գնացին. Արթուրը հիմա Գորիսի արյան փոխներարկման կայանի ղեկավարն է, Արամը՝ Գորիսում եւ տարածաշրջանում

հայտնի ատամնաբույժ է, միայն աղջիկը «շեղում» տվեց՝ ընտրելով երաժշտության աշխարհը:

Բժշկուհու քրոջ աղջիկը՝ Լիլիթ Մանուցյանը, նույնպէս բժշկուհի է: Ակնածաճանքով է խոսում մորաքրոջ մասին:

-Մորաքույրս ամեն ինչ հումորի էր վերածում: Այդպէս հեշտ է ապրելը, ասում էր մորաքույրս: Նա խոսքի երբեք ման չի եկել, դրա պակասը նա երբեք չի ունեցել:

Ու դարձյալ հիշում են Արամ որդու ասածը. Հայաստանում հայտնի ռեմոնտոլոգ Միշա Կարապետյանը մեքենա է ձեռք բերում: Բժշկուհին նկատում է, որ նա է վարում մեքենան: Ձեռքով կանգնեցնում է Միշային, ով էլ արգելակում է մեքենան եւ բժշկուհուն հրավիրում նստելու մեքենան:

-Չեմ նստում, ուղղակի ուզում էի իմանալ՝ մեքենան կարողանո՞ւ ես արգելակել, թե՞ ոչ, - ասում է Ռայա Ադամյանը:

- Մորաքույրս համեղ ուտեստների մեծ վարպետ էր, - շարունակում է Լիլիթ Մանուցյանը, - հանգուցյալ շրջափոխութեամբ Ալեքսանդր Առաքելյանն ամեն անգամ նրանց տանը հյուրընկալվելիս ասում էր՝ այս տան տղման ուրիշ է, այսպիսի տղմա աշխարհի ոչ մի ծայրում չես գտնի, Ռայայի պատրաստածն ուրիշ է:

Նա նաեւ հրաշալի ասեղնագործում էր:

Մենք զարմանում էինք նրա եռանդի վրա, ինչպե՞ս է հասցնում այդ ամենը, ինչպե՞ս է տեղավորվում ժամանակի մեջ, որովհետեւ նրանց տունն իսկական օջախ էր, հյուրերի պակաս երբեք չէր լինում, այն էլ բժախնդիր հյուրերի: Իսկ հյուրերին պատվում էր նաեւ իր համով-հոտով խոսքերով:

Դարձյալ հիշում են Արամի խոսքը՝ մի անգամ բարձրաստիճան հյուրեր էին եկել մեր տուն, եւ մայրս նրանց պատմում էր Գորիսի մասին, ասելով նաեւ՝ Գորիսը Շվեյցարիայի բնութայինն է, Լոնդոնի եղանակը, Փարիզի հասարակությունը...

Կյանքում ոչ մի բան հենց այնպէս չի լինում: Լինում են զուգադիպություններ, լինում են բացառություններ, բայց ամեն բան իր նախահիմքն ունի: Իսկ դա գենն է: Եվ այն գերդաստանը, որից սերվել է Ռայա Ադամյանը, իր առաքելությունը տեսել է մարդկանց փրկելու մեջ:

-Մեր գերդաստանից են եղել աշխարհահռչակ գիտնական, գիտության վաստակավոր գործիչ, բժիշկ, ախտաբան-ֆիզիոլոգ, պրոֆեսոր Ասատուր Սարգսյանը, վիրտուոզ վիրաբույժ, ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ Հայրապետ Հայրապետյանը, ՌԳ բնական գիտությունների ակադեմիկոս, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ախտաբան-ֆիզիոլոգ Գեւորգ Ադամյանը, առողջապահության ոլորտի նշանավոր այլ գործիչներ: Բացի դրանից, մորս հայրը՝ Բակաստեղծ Գուրգեն Ադամյանը, Ակսել Բակունցի եւ Գուսան Աշոտի զարմիկն էր: Մեր գերդաստանը շարունակում է ի վերուստ իրեն տվածը. շարունակում է նոր բժիշկներ տալ հանրությանը: Այսօր նախորդների գործը շարունակում են բժիշկներ Լիլիթ Մանուցյանը, Մերի Ասատրյանը, եւ ու եղբայրս, Կարեն Ադամյանը, Արմեն Ադամյանը, Եվա Առաքելյանը, Նարեկ Առաքելյանը, Տաթևիկ Ադամյանը, Անի Ադամյանը, Մանե Առաքելյանը, Թամարա Ադամյանը, Գարեգին Առաքելյանը եւ էլի ուրիշներ:

Եվ Ռայա Ադամյանն այս նշանավոր գերդաստանի դուստրը լինելով, ունեցել է սեփական ինքնագիր: Եվ Ռայա Ադամյան անուն-ազգանունը դարձել է ոչ միայն այդ գերդաստանի ինքնագրերից, այլեւ՝ Գորիս քաղաքի: Իսկ քաղաքը նրա կենսագրությունը համարում է իր պատմության գեղեցիկ էջերից մեկը:

Ավարդ Մեսրոպյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ «Գորիսի N4 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է տարածքի վարձակալության մրցույթ՝ աշակերտների որակյալ սննդի ապահովման (բուֆետի կազմակերպում) նպատակով: Մրցույթը տեղի կունենա 2018թ. օգոստոս-

սի 29-ին, ժամը 14:00-ին:

Հայտերը ներկայացնել մինչեւ օգոստոսի 27, ժամը 16:00:

Տեղեկությունների համար զանգահարել 0284 2 58 31, 096 73 71 43

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ «Գորիսի Ա.Բակունցի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է վարձակալության մրցույթ՝ աշակերտների որակյալ սննդի ապահովման (բուֆետի կազմակերպում) նպատակով:

Մրցույթը տեղի կունենա 2018թ. օգոստոսի 27-ին, ժամը 12:00-ին:

Հայտերն ընդունվում են մինչեւ 2018թ.-ի օգոստոսի 27-ը ժամը 10:00-ն:

Տեղեկությունների համար զանգահարել 0(284)2-38-71, 091-41-43-72 կամ 091-77-55-44

